

**ԴԵՊԻ ԱՐՑԱԽ-ԽԱԶԵՆԻ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԽՈՐՔԵՐԸ**

Հայկական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի Պատմութեան Հիմնարկը շնորհակալ աշխատանք է կատարել՝ ծրագրելով, ասեղծելով եւ ապա հրատարակելով յատուկ ուսումնասիրութիւն Հայոց արեւելեան կողմանց նահանգների եւ յատկապէս Արցախ-Պաշինի մասին: Նման մենագրութեան անհրաժեշտութիւնը վաղուց էր հասունացել: Ինչպէս յայտնի է, դեռեւս Դ-Ե. դարերից, պարսկա-բիւղանդական աւերող ու յօշոտիչ պատերազմների եւ ապա նրանց նոյնքան դժնդակ քաղաքական ծրագրերի պատճառով՝ Հայոց պատմութիւնը թեւակոխեց օրհասական, անտանելի ժամանակներ: Եւ հենց այդ նոյն ժամանակներից էր, որ Հայոց աշխարհից անջատուած եւ բուն Աղուանքի հետ միասին պարսկահպատակ մէկ մարդպանութեան մէջ մտցուած Հայոց արեւելից կողմանց նահանգների պատմութիւնն սկսեց աստիճանաբար մշտուել եւ, ի վերջոյ, Ի. դարի որոշ մասնագէտների գրչի տակ վերածուել առեղծուածի: Տուժում էր ո'չ միայն Հայոց ընդհանուր պատմութիւնը, այլեւ առհասարակ պատմական ճշմարտութիւնը՝ կովկասեան ժողովուրդների հին ու միջնադարեան իրականութեան վերաբերեալ: Ուստի այս քնադաւառում երբեմնի իրականութեան քացայայտման իւրաքանչիւր առաջընթաց քայլ, մեր կարծիքով, եռակի նշանակութիւն ունի, որովհետեւ, ուղղակի թէ անուղղակի, այն նպաստելու է ոչ միայն հայագիտութեան, այլեւ վրացագիտութեան ու աղուանդիտութեան, ինչպէս նաեւ ադրբեջանագիտութեան զարգացմանը: Այս առումով՝ Բագրատ Ուլուքբեանի վերջերս հրատարակած մենագրութիւնը, որ նուիրուած է Արցախ-Պաշինի պատմութեան մի կարեւոր հատուածին, առաջընթաց խոշոր քայլ է՝:

1. Բ. Ա. ՈՒԼՈՒԹԱՐԵԱՆ, Խաչենի իշխանութիւնը Ժ-ԺԶ դարերում, *Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ. 1975*:

Բազմաթիվ ՈւՆԵՍԿՕ-յան հայ մշակութային գործի նորընթացներից է: Հայաստանում ու նրա սահմաններէջ դուրս ճանաչուած լինելով որպէս գրող ու հասարակական գործիչ, վերջին 10-15 տարիներում էլ նա հայագիտութեան բերել է իր ծանրակշիռ նպաստը, որն արտայայտուած է պատմական Հայաստանի հիւսիս-արեւելեան նահանգների հին ու միջնադարեան կեանքի էական հարցերին նուիրուած մեծարժէք աշխատութիւններով²:

[illegible]

2. Ռ. Ուլուբարեանի գործունէութեան առաջին շրջանը հիմնականում կապուած է եղել Լեոնային Ղարաբաղի ինքնավար մարզի հետ։ Այնտեղ նա 18 տարի ղեկավարել է Գրողների Միութեան մարզային մասնաճիւղը, եղել է Մշակութի կազմարել է Գրողների Միութեան մարզային Ղարաբաղ մարզային թերթի խմբ-մարզային վարչութեան պետ, «Խորհրդային Ղարաբաղ» մարզային թերթի խմբ-մարզային վարչութեան պետ, «Խորհրդային Կովկասի» նախագահի տեղակալ, եւ բաղիր, Մարզային խորհրդի գործադիր Կոմիտէի նախագահի տեղակալ, եւ չորսը երեք տասնեակ տարիներ ընթացքում՝ գրել է մի շարք վէպեր, վիպակ-չորսը երեք տասնեակ տարիներ ընթացքում՝ գրել է մի շարք վէպեր, վիպակ-չորսը երեք տասնեակ տարիներ ընթացքում՝ գրել է մի շարք վէպեր, վիպակ-

գուներով. իսկ «Թարթառ» վիպակն արժանացել է Գրողների Համամիութենա-

3. ՏՃ՝Ս Զ. Ս. ԱՆԱՍՍԻԱՆ, Նոր հայեացք աղուամագիտության բնագավառում,
«Armeniaca» (Mélanges d'études arméniennes), Venise, Saint Lazare
1969, էջ 289-315: Նորը՝ նաև Ֆրանսերէն. H. S. ANASSIAN, Une mise
au point relative à l'Albanie Caucasienne, ի «Revue des Etudes Armé-
niennes», nouv. série, t. VI, 1969, p. 299-330.

րուժեան ընդդրկած (ԺԺԶ. դարեր), այնպէս էլ նախորդ շրջաններում :

Այստեղ հարկ է լաել, որ խնդրոյ առարկայ ժամանակին ու նախընթացին վերաբերող տասնեակ տեղանուններ առաջին անգամ այստեղ են ճշգրտուում, ստանում իրենց մեկնաբանութիւնները: Ուրուբարեանին է պատկանում նաեւ մինչեւ վերջ փաստարկուած բացատրութիւնն այնպիսի տեղանունների (Աղուանք, Ալբանիա, Առան), որոնց մասին եղած սխալ պատկերացումները ցայսօր հիմք են դարձել հակապատմական շատ մոլորութիւնների համար: Այս դրքում վերջին տեղանունների մասին հաղորդուած են կուռ ընդհանրացումները մի այլ ուսումնասիրութեան, որը նոյնպէս պատկանում է Բ. Ուլուբարեանի գրչին⁴: Կատարուած են նաեւ պատմա-աշխարհագրական բազմաթիւ ճշգրտումներ, որոնց մի մասը լոյս է ընծայուել մի քանի տարի առաջ՝ ռուսել ընդարձակ չարագրանքով⁵:

Հետազոտողի աշխատութեան ակնառու նուաճումներից մէկը ինչն է իշխանութեան տոհմային ակունքների քննութիւնն է։ Նա այստեղ յիշում է բիւզանդական կայսր ու պատմիչ Կոստանդին Ծիրանածնի վկայութիւնն այն մասին, որ Ժ. դարի Հայաստանում Բիւզանդիայի ճանաչած քաղաքական միաւորներից մէկն է եղել ինչն է իշխանութիւնը։ Յիշում է նաեւ Մխիթար Գոշի տեղեկութիւնը, որի համաձայն՝ այդ ժամանակի Հայաստանում կորած էին Հայոց պետականութեան մնացորդները եւ բնաշխարհում միայն ինչն է իշխանութիւնն էր մնացել, իսկ արտաշխարհում՝ Կիլիկիայի Ռուբինեան պետութիւնը։ Այդ երկուսի հետ էլ մեր մեծ իրաւագէտն, ինչպէս նկատում է Ուլուքաբեանը, «իր ժողովրդի քաղաքական միասնութեան բաղձանքներն էր զուգորդում»։

«Որտեղից է սկիզբը առնում Պաշենի իշխանութիւնը, որո՞նք են վերականգնել նրա էթնիկական (ցեղագրական) եւ վարչա-քաղաքական ակունքները», - հարց է տալիս հեղինակը, եւ նախորդ հետազոտողների աշխատութիւններում ցոյց տալիս այդ հարցերի այնպիսի պատասխաններ, որոնք այլազան են, յաճախ իրերամերժ, իսկ հիմնականում՝ հեռու պատմական իրականութեան ճշմարիտ պատկերը լինելուց։ Այսպէս, օրինակ, ճշնութեան առնուած համանման կարծիքներից մէկը, որ պատկանում է ականաւոր պատմաբան-հնագէտ Յովսէփ Օրբելուն եւ նրանից էլ անցել է ուրիշների, հիմք է դարձել հակապատմական պատկերացումների համար։ «ԺԲ. դարի վերջում, - գրել է Յովսէփ Օրբելին, - Միւնիքի փոքրիկ Թագա-

4. Բ. Ա. ՈՒԼՈՒԲԱՅԵԱՆ, «Ալբանիա», «Ադուանֆ», և «Առամ» տեղամուսմները, «Պատմաբանական իրական Հանդէս, 1971, Թ. 3 (54), էջ 115-128:

5. Բ. Ա. ՈՒԼՈՒԲԱԲԱՆ, Պատմա-աշխարհագրական մշգրտումներ, «Բանբեր Հայաստանի», 1971, Թ. 1 (13), էջ 176-186:

ւորութիւնը, որն, անկախ իր ծաւալից, թաղմիցս անհամեմատ խոշոր դեր էր խաղացել Հայաստանի եւ նոյնիսկ Վրաստանի ընդհանուր պատմութեան մէջ, ընկաւ: Տիրապետող հարստութիւնը 1166 թուականին ընդհատուեց՝ Գրիգոր ու Սմբատ Իշխանների մահով: Հենց այս ժամանակ էլ սկսում է բարձրանալ Արցախի կամ Խաչենի իշխանութիւնը»:

Ուլուրաբեանը ցոյց է տալիս, որ Արցախ-Խաչենի իշխանութեան վիճակը ոչ մի ժամանակ պայմանաւորուած չի եղել Սիւնիքի թագաւորութեան վերելքով կամ վայրէջքով։ Եւ առհասարակ «Խաչենի (նախկին Արցախի) իշխանութիւնն իր բազմադարեան պատմութեան մէջ երբեք չէր ընկել կամ դադարել, որպէսզի Սիւնեաց թագաւորութեան անկումից յետոյ միայն սկսէր բարձրանալ։ Այն չէր ընկել յատկապէս Սիւնեաց կամ Բաղաց-Ապալանի գոյութեան ժամանակներում, որովհետեւ, եթէ այս թագաւորութիւնը վայրէջքի շրջաններում ամէն անգամ Խաչենի իշխանական տոհմից էր արժանաւոր իշխանադուն տանում՝ թափուր մնացած իր գահի համար, ապա աւելորդ է մտածել, թէ Խաչենի իշխանական տունն ընկած կամ դադարած է եղել։ Մանաւանդ, երբ նման տեղաշարժերի մասին տեղարած է եղել։ Մանաւանդ, երբ նման տեղաշարժերի մասին տեղաշարած է եղել։ Մանաւանդ, երբ նման տեղաշարժերի մասին տեղաշարած է եղել։ Մանաւանդ, երբ նման տեղաշարժերի մասին տեղաշարած է եղել։

(Մտեփանոս Օրբելեան) անպայման
նշում է՝ զէպի Բաղաց-Ապալան գահակալ գնացողի հարազատներին,
որում Տ. զէպի Բաղաց-Ապալան գահակալ գնացողի հարազատներին,
որում Տ. զէպի Բաղաց-Ապալան գահակալ գնացողի հարազատներին,

րակ իշխաններ էին, այլ (իմֆմալ), քաղաք, քաղաքապետներ էին,

[illegible]

6. Ուրարտական արձանագրություններում Արցախի ահուկն անանդուած է Վերդա-
խունի», «Արդշեխէ», «Ուրդշեխէ» ձեւերով, եւ այս անուններով կոչուած տա-
րածութիւնը նախ քան մ. թ. առաջին հազարամեակի սկզբներէջ յիշատակում է
Իրբեւ Ուրարտուի պետութեան քաղկացուցիչը (տե՛ս Գր. ՂԱՓԱՆՑԵԱՆ, Ուրար-
տուի պատմութիւնը, Երեւան 1940, էջ 186. Բ. Բ. Пиетровский, Ванское
царство, Москва 1959, сир. 89 и м. 6.):

ղականօրէն փոշու եւ մոռացութեան ընդերքից հրապարակ է հանում նորանոր փաստեր եւ եղածների օգտագործմամբ շարադրում նաեւ այդ հարցի նոր պատմութիւնը:

Պատմա-քաղաքական հարցերին զուգահեռ՝ Բ. Ուլուբաբեանն առիթը բաց չի թողնում նկատելու, գնահատելու ժողովուրդների բարեկամութեանը վերաբերող նիւթերը, բացայայտելու հասարակական իրողութիւնները՝ ցոյց տալով ժողովրդական զանգուածների եւ աշխատավորութեան ծանր վիճակը, ճորտային անյուր տառապանքը, ինչպէս նաեւ դէպի ազատութիւն ունեցած նրանց ճիգն ու երազանքը: Նա անհրաժեշտաբար անդրադառնում է նաեւ Աղուանից Եկեղեցու եւ յատկապէս Գանձասարի կաթողիկոսութեան պատմութեանը, նրա շուրջը հիւսելով կուռ մի շարադրանք, որը հիմնաւոր դադափար է տալիս երկրամասի Եկեղեցու անցած դժուար ճանապարհի մասին:

Մենագրութեան ամէն մի հատուածում Բ. Ուլուբաբեանն իր խօսքն աւարտում ու եզրափակում է բովանդակալից ու պերճախօս ամփոփումով, հայոց ընդհանուր պատմութեան անդրադարձումներով ու համեմատական քննութագրումներով: Այս հատուածներն արդէն մի աւելորդ անգամ եւս ապացուցում են, որ մենք գործ ունենք Հայկական Աղուանքի եւ նրա մասը կազմող Խաչենի պատմութեան անձնուիրաբար ծառայող մի հմուտ ու եռանդուն մասնագէտի հետ, որն իր մենագրութիւնը շարադրել է ոչ միայն նիւթին՝ վերաբերող հարցերի խորիմացութեամբ, այլեւ հայոց ընդհանուր պատմութեան լաւատեղեկութեամբ:

Բ. Ուլուբաբեանի մենագրութիւնը, իր բուն նպատակին ծառայելուց բացի, անհրաժեշտաբար գիտական շրջանառութեան մէջ է դնում մի քանի տասնեակ գործիչների կեանքին ու գործին վերաբերող փաստեր, նկարագրութիւններ, համապատասխան ճշգրտումներ, որոնք մի առանձին արժէք են աւելացնում ընդհանուրի վրայ:

Աշխատութիւնից երեւում է, որ նրա հեղինակը չի քաւարարուել եղած յիշատակարան-արձանագրութիւնների օգտագործմամբ, այլեւ քաղել է դրանք՝ կազմելով անձնական կարիքների համար յատուկ ժողովածու, առ որ երբեմն յղում է նա ընթերցողին: Դա մեզ տանում է դէպի գիտնականի գլորոցները՝ ուր, տպագրութեան պատրաստ վիճակով, լոյս աշխարհ գալու է ասպսում այս մենագրութեան հետ կապուող այն շրջանցուած հետազոտութիւնը, որ վերաբերում է Աղուանից (Գանձասարի) կաթողիկոսութեանը:

Մենք կը կամենայինք առանձին ուրախութեամբ եւ գոհունակութեամբ խօսել Բ. Ուլուբաբեանի լեզուի, ոճի, շարադրանքի գեղեցկութեան, հմտութեան, յստակութեան եւ օրինակելիութեան մասին: Նման լեզուով ու ոճով մեր օրերում շատ քչերն են կարողանում

դրել: Այս յոյժ կարեւոր արժանիքը գալիս է մի նոր փայլ տալու նրա քննուող մեծարժէք մենագրութեանը:

Բ. Ուլուբաբեանի մենագրութիւնն իր ամբողջութեամբ, մեր խորին համոզմունքով, հայագիտական մտքի առաջընթացի փայլուն արտայայտութիւններից մէկն է եւ նրա հեղինակի գիտական բարեխղճութեան ու հմտութեան գեղեցիկ վկայութիւնը:

Հոռոմ, մարտ-ապրիլ 1978 թ.

Յ. Ս. ԱՆԱՍԵԱՆ

Résumé VERS L'ARRIERE-FOND DE L'HISTOIRE DE LA REGION D'ARC'AX - XAJ'EN

(H. S. ANASSIAN)

L'auteur fait un retour par cette communication aux problèmes d'arménologie qui ont des rapports avec l'albanologie et auxquels il avait consacré naguère une étude: «Une mise au point relative à l'Albanie caucasienne», parue dans *Révue des Etudes Arméniennes*, N.S., VI (1969), p. 299-330, dont l'original arménien avait paru la même année en *Armeniaca*. 299-330, dont l'original arménien avait paru la même année en *Armeniaca*. *Mélanges d'Etudes Arméniennes* (St. Lazare - Venise, p. 289-315). La présente communication est consacrée à l'analyse des questions soulevées par la récente monographie de Bagrat Ouloubabian, *La principauté de Xaj'en aux X^e-XV^e siècles* (Erévan, 1975).

Depuis la publication du livre de A. S. Mnac'akanjan, *Autour des problèmes de la littérature de l'Albanie caucasienne*, Erévan, 1966 (en russe), B. Ouloubabian avait apporté sa contribution à l'éclaircissement de plusieurs problèmes liés à l'histoire, à l'histoire géographique, à la vie politique et culturelle de l'Albanie caucasienne, problèmes dont l'éclaircissement jette de la lumière sur les différents aspects de l'histoire de l'Arménie médiévale. Qu'il suffise ici de rappeler l'opinion mongole, l'Arménie a perdu les études précédentes qu'avec la domination mongole, l'Arménie a perdu pour toujours et sans exception toute structure politique autonome et que la population n'a pu survivre que sous le patronage de la hiérarchie ecclésiastique. Or, Ouloubabian montre avec des preuves sûres que cette assertion ne correspond pas à la vérité des faits.

Dans l'Arménie orientale, comme à Zeytoun en Cilicie, les anciennes principautés locales continuaient farouchement leur existence jusqu'aux XVIII^e-XIX^e siècles. Aussi dans la région d'Arc'ax - Xaj'en l'ancienne maison de princes-naxarar, Aransahik, dont les mélikats de Gharabagh étaient les ramifications, fut cette puissante organisation politico-administrative dont avaient à tenir compte tous les dominateurs étrangers. La fondation de cette thèse constitue le noyau central de l'œuvre d'Ouloubabian parmi les nombreuses questions qui y sont traitées avec compétence et précision.